

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 10-ը հոկտեմբերի 2018 թվական

քաղաք Գյումրի

2018 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքների ղեկավարները մասնակցում էին նիստին:

Մարզի խորհրդի նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանը:

Մարզի խորհրդի նիստին հրավիրված էին՝

- ՀՀ Շիրակի մարզի դատախազ Կարեն Գաբրիելյանը,
- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Սևան Քոչարյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալները, խորհրդականները, օգնականները,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը՝

1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2018 թվականի 9 ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

2. Մարզի համայնքներում բերքահավաքի և գյուղատնտեսական ընթացիկ աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

3. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների կատարման ընթացքի մասին

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյան

4. Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Մուշեղ Մուրադյան

5. Սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2018 թվականի 9 ամիսների կատարման մասին

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

(Ձեկուցագիրը կցվում է):

Անդրադառնալով համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման խնդիրն մարզպետը նշեց, որ մարզի խորհրդի նախորդ նիստին արձանագրված՝ սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ ունեցող համայնքներում (Սարատակ, Գետափ, Գեղանիստ, Սպանդարյան, Վարդաքար, Սարապատ, Աշոցք, Անի, Ախուրյան, Ազատան, Հայրենյաց) այս եռամսյակում ևս դրական տեղաշարժ չի գրանցվել, որը բավական մտահոգիչ է, քանի որ այդ համայնքներում սեփական եկամուտների հավաքագրումները մարզի միջին ցուցանիշից էլ ցածր են:

Մարզպետը հորդորեց համայնքների ղեկավարներին սեփական պարտականությունների կատարման հարցում չթերանալ, քանի որ հարկերը, որոնք հավաքագրվելու են, ուղղվելու են համայնքների հոգսերի թեթևացմանը, բացի այդ, համայնքների սեփական եկամուտների

բարձր ցուցանիշների առկայության դեպքում միայն համայնքները կարող են հայտեր ներկայացնել պետության կողմից տրամադրվել սուբվենցիոն ծրագրերից օգտվելու համար:

Մարզպետը տեղեկացրեց նաև, որ իր հանձնարարականով ստեղծված են աշխատանքային խմբեր, որոնք աջակցելու են համայնքների ղեկավարներին այս գործընթացում, սակայն համայնքների ղեկավարները պետք է իրենց աշխատանքները ճիշտ և արդյունավետ կազմակերպեն:

ԼՍԵՑԻՆ 2. Մարզի համայնքներում բերքահավաքի և գյուղատնտեսական ընթացիկ աշխատանքների մասին

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

(Ձեկուցագիրը կցվում է):

Մարզպետն անդրադարձավ համայնքներում տեղի ունեցած կարկտահարությունների դեպքերի հետ կապված համայնքների ղեկավարների հարցադրումներին և նշեց, որ ստեղծված են մասնագիտական հանձնաժողովներ, վնասների գնահատման ամբողջական փաթեթներն ուղարկված են գյուղատնտեսության նախարարություն և պետությունն առայժմ առաջնահերթ աջակցում է սահմանամերձ համայնքներին, գործառույթն ընթացքի մեջ է:

Հարցի առնչությամբ հայտարարությամբ հանդես եկավ նաև մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Արամ Անտոնյանը՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին առավել հետևողական գտնվել և աղետների, կարկտահարությունների ժամանակ, մինչև մարզային հանձնաժողովի համայնք այցելելը, ստեղծել համայնքային հանձնաժողովներ, որոնք հենց սկզբից կկարողանան արձագանքել ու արձանագրել վնասները:

ԼՍԵՑԻՆ 3. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների կատարման ընթացքի մասին

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյան

(Ձեկուցագիրը կցվում է):

ԼՍԵՑԻՆ 4. Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Մուշեղ Մուրադյան

(Ձեկուցագիրը կցվում է):

ԼՍԵՑԻՆ 5. Սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան

(Ձեկուցագիրը կցվում է):

Ձեկույցի առնչությամբ Գյումրու քաղաքապետը ներկայացրեց համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող երկու ծրագրերի (տրանսպորտի և կանաչ էներգիայի) վերաբերյալ տեղեկություններ և խնդրեց մարզպետի միջնորդությունն ու աջակցությունը դրանց հաստատման համար:

Անդրադառնալով նիստի օրակարգի առաջին հարցին՝ մարզպետը ձայն տվեց մարզպետի տեղակալ Արա Մելիքջանյանին, ով ևս մեկ անգամ ներկայացրեց համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործում աջակցություն ցուցաբերելու համար կազմավորված աշխատանքային խմբի աշխատանքներին և առաջարկեց համայնքների ղեկավարներին համագործակցել: Միաժամանակ տեղեկացրեց, որ նոր սուբվենցիոն ծրագրային հայտերի կազմման, դրանց ներկայացման ընթացակարգերի վերաբերյալ համայնքները մշտապես կարող են մեթոդական օգնություն և օժանդակություն ստանալ մարզպետարանից:

Նիստի ավարտին մարզի դատախազ Կարեն Գաբրիելյանը դիմեց համայնքների ղեկավարներին՝ հորդորելով զերծ մնալ կոռուպցիոն գործարքներից ու պայմանավորվածություններից, այլապես նրանց նկատմամբ կցուցաբերվի ամենախիստ մոտեցումը, ընդհուպ մինչև լիազորությունների դադարեցում ու քրեական պատասխանատվության ենթարկում:

Մարզի խորհրդի նիստն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

ԿԱՐԵՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Ձ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

«Շիրակի մարզի համայնքների 2018 թվականի բյուջեների սեփական եկամուտների ինն ամիսների հավաքագրման արդյունքների մասին

Ձեկուցող՝ «Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2018թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ «Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 80.3%-ով (տարեկան պլանի նկատմամբ՝ 56.3%-ով), նախատեսված 1,806,300.7 հազ. դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,449,773.5 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 356,527.2 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2018թ. բյուջեների ինն ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2018թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	254,476.0	197,978.2	- 56,497.8	77.8
Գույքահարկ	650,830.0	473,822.6	- 177,007.4	72.8
Պետական տուրք	35,769.3	35,907.3	138.0	100.4
Տեղական տուրք	101,351.1	92,471.8	- 8,879.3	91.2
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	270,681.1	210,517.3	- 60,163.8	77.8
ա/ հողի վարձավճար	224,444.2	169,450.8	- 54,993.4	75.5
բ/ գույքի վարձավճար	46,236.9	41,066.5	- 5,170.4	88.8
Այլ եկամուտներ	493,193.3	439,076.4	- 54,116.9	89.0
Ընդամենը սեփական եկամուտներ	1,806,300.7	1,449,773.5	- 356,527.2	80.3

2018թ. ինն ամիսների փաստացի հավաքագրվածի աճի տոկոսը 2017թ. համեմատությամբ կազմում է 12.5% կամ ավել է հավաքագրվել 161,208.9 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ. դրամ/

Հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2018թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Անի	115,290.0	73,915.5	- 41,374.5	64.1
2	Ամասիա այդ թվում՝	67,325.3	57,743.0	- 9,582.3	85.8
2.1	Ամասիա	34,663.7	32,534.3	- 2,129.4	93.9
2.2	Արփի	32,661.6	25,208.7	- 7,452.9	77.2
3	Արթիկ	265,826.8	219,907.9	- 45,918.9	82.7
4	Ախուրյան այդ թվում՝	291,259.7	203,617.0	- 87,642.7	69.9
4.1	Ախուրյան	140,980.0	88,173.5	- 52,806.5	62.5
4.2	Մարմաշեն	49,003.0	38,447.8	- 10,555.2	78.5
5	Աշոցք այդ թվում՝	76,716.2	48,424.8	- 28,291.4	63.1
5.1	Աշոցք	47,216.2	32,334.8	- 14,881.4	68.5
5.2	Սարապատ	29,500.0	16,090.0	- 13,410.0	54.5

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2018թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում՝ 63.1%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 83.4% կամ նվազման տոկոսը կազմում է 20.3, գումարային նվազումը կազմել է 9,420.7 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2018թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 85.5%, **Արթիկ** քաղաքը՝ 87.3%:

Մարզի թվով 23 համայնքներ չեն ապահովել 2018թ. ինն ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 80.3%-ը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

«Ապետական բյուջեով 2018 թվականին ինն ամիսներին նախատեսված 3,316,459.6 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Ձ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզում 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների և բերքահավաքի ընթացքի վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

2018թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /հա/
		2017թ.	2018թ.	
1.	Հացահատիկ	41997	35621	-6376
	այդ թվում՝ աշնանացան ցորեն	21730	18458	-3272
	գարնանացան գարի	20183	17018	-3165
2.	Կարտոֆիլ	3721	3221	-500
3.	Բանջարեղեն	1758	1451	-307
4.	Կերային մշակաբույսեր	12980	11686	-1294
5.	Տեխնիկական մշակաբույսեր	172	105	-67
Ընդամենը		60630	52085	-8545

2018թ. բերքի տակ կատարվել է 10 տ սուպեր էլիտային աշնանացան ցորենի սերմացուի ցանքեր: Գարնանացանի համար մարզին հատկացվել է 583.51 տ գարնանացան գարու, 147.3 տ կորնզանի, 3 տ առվույտի, 11.2 տ գարնանացան ցորենի և 0.56 տ եգիպտացորենի, 0.28 տ սիսեռի և 0.05 տ ոլոռի սերմացուներ:

Հացահատիկի բերքահավաք և խորհունձ.

Մշակաբույսը	Ցանվել է /հա/	Հնձվել է /հա/	Միջին բերքը /ց/	Համախառն բերքը /տ/
աշնանացան ցորեն	18458	18458	35	64500
գարնանացան հացահատիկ	17162	17162	29	49500
խոտ	-	-	30	150000

Համախառն բերք.

Մշակաբույսը	2017թ. /տոննա/	2018թ. /կանխատեսվող/ /տոննա/
Հացահատիկ	77553	114000
Կարտոֆիլ	93342	90000
Բանջարեղեն	49053	45000

Հացահատիկի համախառն բերքի կանխատեսվող աճը պայմանավորված է 2018թ. հացահատիկի միջին բերքի բարձր ցուցանիշով, իսկ կարտոֆիլի և բանջարեղենի համախառն բերքի կանխատեսվող նվազումը պայմանավորված է ցանքերի ֆիզիկական ծավալների կրճատումով:

Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրերի շրջանակներում մարզում իրացվել է 2.4 տոննա ֆոսֆորական ու 2.2 տոննա կալիումական պարարտանյութեր և 164000 լիտր դիզելային վառելիք: ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 7 արձանագրային որոշմամբ նախատեսված դիզելային վառելիքի ծրագիրը իրեն չափորոշիչներով շարունակվում է մինչև ս/թ նոյեմբերի 30-ը ներառյալ: Ծրագրից օգտվել ցանկացող համայնքների հողօգտագործողները համապատասխան վճարումներ և ծրագրով նախատեսված ընթացակարգը իրականացնելու դեպքում վառելիքի տրամադրումը կիրականացվի 2-3 օրվա ընթացքում:

Մարզում գործում են թվով 89-ը հակակարկտային կայանք, որից 2-ը տեղադրվել է 2018թ. Լուսակերտ համայնքում: 2018թ. ընթացքում բնական աղետների հետևանքով տուժել են մարզի թվով 22 համայնքների գյուղատնտեսական նշանակության շուրջ 5100 հա ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է մոտ 3.09 մլրդ դրամ: Վնասի գնահատման համապատասխան փաթեթները ամփոփվել և ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Ջրամբարների լցվածությունը 09.10.2018թ. դրությամբ

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 09.10.2017թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 09.10.2018թ. /մլն մ³/	Աճ/նվազում (+/-) /մլն մ³/
1	Ախուրյան	525	25.0	37.6	+12.6
2	Արփի լիճ	105	7.7	35.0	+27.3
3	Կառնուտ	22.6	2.7	8.68	+5.98
4	Սառնաղբյուր	4.8	0.41	0.33	-0.08
5	Վարդաքար	5	0.42	0.64	+0.22
6	Թավշուտ	6	0.25	2.56	+2.31
7	Մանթաշ	8.2	1.96	2.58	+0.62
8	Ջաջուռ	0.28	0.22	0.22	0
Ընդամենը		151.88	13.66	50.01	+36.35

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Ոռոգման նպատակով օգտագործված ջրերի և գումարների հավաքագրումների օպերատիվ տվյալները 2018թ. (ըստ <<Շիրակ>> ՋՕԸ-ի)

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը	Չափի միավորը
1	Ջրառ	12547	հազ. մ ³
2	Ջրառուք	5457.25	հազ. մ ³
3	Հասույթ	60029.7	հազ. դրամ
4	Գանձում	43471.8	հազ. դրամ
5	Գանձման տոկոս	72	%

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի օգոստոսի 30-ի «ՀՀ ոռոգման նպատակով տրամադրվող ջրի քանակի, դրա նպատակային և համաչափ բաշխման հետ կապված» հանձնարարականի ս/թ սեպտեմբերի 6-ին, 7-ին, 24-ին և հոկտեմբերի 8-ին աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է մարզում ոռոգման նպատակով տրամադրվող ջրի քանակի և դրա նպատակային բաշխման հետ կապված հարցերը, որի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Ձ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

«Կետական բյուջեի միջոցներով մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների կատարման ընթացքի մասին

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյան

28.08.18թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ մարզպետների մասնակցությամբ կայացած խորհրդակցության №06 արձանագրության 1-ին կետով ի գիտություն է ընդունվել այն, որ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներին ուղղված շինարարական բոլոր ծրագրերը պետք է իրականացվեն համապատասխան համայնքների կողմից ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Նախագծման աշխատանքների կատարման վերջնակաժամկետ էր սահմանվել 04.10.2018թ.:

ՀՀ Շիրակի մարզպետի կողմից առաջարկվել է բոլոր համայնքների ղեկավարներին սահմանված ժամկետում իրականացնել նախագծման աշխատանքները:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ծրագիր էին ընդգրկվել թվով 17 օբյեկտների շինարարական աշխատանքներ, թվով 2 սուբվենցիոն ծրագրեր և թվով 3 բնակարանի գնման վկայագրերի տրամադրման հարցեր (տեղեկանքը կցվում է):

Թվով 17 շինարարական օբյեկտներից 3-ը առողջապահական օբյեկտներ են, 10-ը՝ հանրակրթական դպրոցներ, 1-ը՝ մարզադպրոց, 2-ը՝ հեղեղատարների մաքրում և 1-ը՝ Գյումրու ժողգործիքների ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում:

Հետագայում այս ծրագրում ընդգրկվեցին նաև առկա նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ունեցող երկու ճանապարհահատվածների շինարարական աշխատանքներ (Հոռոմ-Հովտաշեն և Զաջուռ-Մեծ Սարիար):

Այսօրվա դրությամբ արդեն իսկ պատրաստ են բոլոր 17 օբյեկտների նախագծային փաստաթղթերը, որոնք ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

27.09.18թ. ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով արդեն իսկ ֆինանսավորվել են մարզի առաջնահերթ լուծում պահանջող օբյեկտները, այդ թվում 334135.0 հազ. դրամ հատկացվել է Տարածքային զարգացման հիմնադրամին թվով 16 օբյեկտների շինարարության համար:

10.800.0 հազ. դրամ հատկացվել է Ոսկեհասկ համայնքին հեղեղատարի մաքրման համար: 59372.6 հազ. դրամ հատկացվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը 2 ճանապարհահատվածների հիմնանորոգման համար: Առանձին որոշմամբ 22093.0 հազ. դրամ սուբվենցիա է հատկացվել Ամասիա և Գյումրի համայնքներին՝ համապատասխանաբար բրդի վերամշակման արտադրամասի կառուցման և բազմաբնակարանային շենքերի միասնական տեղեկանքների ձեռքբերման համար:

Ընդհանուր առմամբ հատկացվել է 426.4 մլն. դրամ գումար: Համայնքների կողմից կատարվելու է 21925.0 մլն. դրամ համաֆինանսավորում:

Թվով 3 բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագիրը դեռևս չի հաստատվել:

«Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2018 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ

*Ձեկուցող՝ «Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ»՝
Մուշեղ Մուրադյան*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գործունեության նպատակն է՝ իրականացնել հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է մարզպետարանի գործունեության բարելավմանը և մարզպետարանի համար հավելյալ արժեքի ստեղծմանը, ինչպես նաև օժանդակել մարզպետին, որպես հանրային ոլորտի կազմակերպության ղեկավար, հասնելու իր առջև դրված նպատակներին՝ նվազեցնելու խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը, ապահովել մարզպետարանի աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին, հանրային հատվածի կազմակերպություններին լինել հաշվետու ողջ հանրության առջև, գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումն ու իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը:

Ներքին աուդիտի բաժնի բոլոր մասնագետները ունեն ներքին աուդիտորի որակավորում, ընդգրկված են լիազոր մարմնի կողմից որակաորված ներքին աուդիտորների ցանկում:

2018 թվականին բաժնի աշխատակիցներից 4-ը մասնակցել են լիազոր մարմնի կողմից կազմակերպած շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

2018 թվականի հունիսի 4-ից մինչ այսօր ընկած ժամանակահատվածում ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է՝ 2 ֆինանսական, 3 համակարգի գնահատման, 3 համապատասխանության աուդիտ և 3 մասնագիտական ուսումնասիրություն, ընթացքի մեջ է «Փանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսական աուդիտը:

Վերը նշված ժամանակահատվածում իրականացված աուդիտների արդյունքում հայտնաբերվել են 43 միավոր թերություններ և խախտումներ, որի արդյունքներով արձանագրվել է 33235.2 հազ. դրամ վերականգնման ենթակա գումար, աուդիտորական 3 հաշվետվություն ուղարկվել է համապատասխան իրավապահ մարմիններին, 3 կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, աշխատանքից ազատվել են 1 առողջապահական փակ բաժնետիրական ընկերության և 1 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ: Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին և պատասխանատու անձանց տրվել են համապատասխան հանձնարարականներ արձանագրված խախտումների և թերությունների ուղղման վերաբերյալ:

Ձ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզի համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան

Սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի անվանումներ

h/h	Համայնք	Հայտի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ.դրամ)	Համամասնություն		%	Շահող	Կարգավիճակ	Ծանոթություն
				Համայնք	Պետություն				
1		1. Կոմունալ ծառայության և աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում	136,310	72,244	64,066	53	Կամազ Արմենիա ՓԲԸ և Սպեցմաշ ՍՊԸ	Կարգավիճակ	2 ինքնաթափ, 3 աղբատար (20 աշխ)
2	Գյումրի	2. Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի հրապարակի կազմակերպում և բարեկարգում:	105,484	73,839	31,645	70	Վահրադյան Շին ՍՊԸ	հաստատված է	Նորաճ հրապարակ՝ 28000 քմ, որից հասարակական կառուցապատման տարածք՝ 10850 քմ, կանաչապատ տարածք՝ 1450 քմ, ջրավազան՝ 80 քմ, սալիկապատ տարածք՝ 5029, և խճապատ տարածք՝ 6900 քմ
3		3. Կոմունալ ծառայության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում	93,900	46,950	46,950			ուղարկվել է նախարարություն	3 հատուկ մաքրման տեխնիկա (10 աշխ)
4	Ազատան	Ազատան համայնքի կենտրոնական թիվ 1 փողոցի հիմնանորոգման մայթերի նորոգման և երկրորդական փողոցների խճապատման աշխատանքներ	22,800	15,960	6,840	70	Մերձմեսկոպյան ԲԲԸ	հաստատված է	3կմ փոսային նորոգում, ասֆալտապատում 1140 մ, մայթ 720 գծամետր

5	Ախուրյան	1. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրում համայնքային կենտրոնի, մանկապարտեզի կառուցում:	49,831	29,899	19,932	60	Շինարար ՍՊԸ	հաստատված է	Գրադարան, բուժկետ, արտադարձրոցական խմբակներ (երգ, պար, նկարչություն), 55 երեխա (10 աշխ)	
6		2. Նոր Ախուրյան թաղամասի ճանապարհի շարունակության 1314մ հատվածի ասֆալտապատում:	43,186	25,912	17,274	60	Դուստր Մոնիկա ՍՊԸ	հաստատված է		
7		3. Ախուրյան գյուղի 3.Ղամբարյան փողոց, 2-րդ անցում, թիվ 25ա և Ախուրյանի խճուղի թիվ 83 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ	15,449	9,269	6,179	60		ուղարկվել է նախարարություն	Շահառու 188, երկու շենք 45 բնակարան	
8		4. «Բասեն մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգման ծրագիր	16,600	9,960	6,640	60		ուղարկվել է նախարարություն	3-5 տարեկան երեխաներին ապահովել որակյալ պատշաճ նախադպրոցական կրթություն (3 աշխ)	
9		5. Կառնուտ բնակավայրի հասարակական նշանակության շենքի վերանորոգման աշխատանքներ	15,000	9,000	6,000	60		ուղարկվել է նախարարություն	հանդիսությունների սրահ՝ 95 քմ, խաղասենյակ՝ 65 քմ (2 աշխ)	
10		6. Հովիտ բնակավայրի վարչական կենտրոնի և բնակիչների հանգստի կազմակերպման համար նախատեսված կառույցի վերանորոգման աշխատանքներ	13,650	8,190	5,460	60		ուղարկվել է նախարարություն	Կվերանորոգվի 188.34 քմ շինություն	
11		Անի	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի սահմանամերձ և լեռնային 10 բնակավայրի գիշերային լուսավորման ցանցի անցկացման աշխատանքներ:	32,400	19,440	12,960	60	Ուլուտ Սենթր ՍՊԸ	հաստատված է	250 լուսակիր 7 կմ երկայնքով, շահառու՝ 9000 բնակչություն: (Անիավան, Բագրավան, Ջրափի, Աղին, Հայկաձոր, Լուսաղբյուր, Գուսանազյուղ, Սարակապ, Լանջիկ և Սառնաղբյուր)

12	Աշոցք	ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Փոքր Սեպասար-Մ1 ճանապարհահատվածի կոպճապատման աշխատանքներ	6,810	5,000	1,810	74	Աշոցքի ճանշին	հաստատված է	1323 մետր կոպճապատման աշխատանքներ, հողային պաստառի հարթում՝ 9129 քմ, մանգաղաձև ծածկ կապճավագային խառնուրդ՝ 9128 քմ
13	Առափի	ՀՀ Շիրակի մարզի Առափի համայնքի ներհամայնքային թիվ 1 ճանապարհի 1,2 կմ հատվածի և համայնքի կենտրոնի ասֆալտապատում:	54,982	32,989	21,993	60	Մերձմեսկոպյան ԲԲԸ	հաստատված է	1500երկարությամբ կողայի առուներ, կտեղադրվի կողային սյուներ՝ 250 խոր.մ, ազդանշանային սյուներ 26 հատ
14		Անուշավան համայնքի ներհամայնքային թիվ 13,14,24,25,29 փողոցների բազալտե խճով կառուցման աշխատանքներ	7,590	4,836	2,754	64	Ճանշին ՓԲԸ	հաստատված է	բազալտե խճով կիլիմանորոգվի 6260 քմ
15	Անուշավան	Անուշավան համայնքի ոռոգման ինքնահոս փակ համակարգի պլաստիկ խողովակաշարով կառուցման ծրագիր	18,006	7,203	10,804	40		ուղարկվել է նախարարություն	Ոռոգման փակ ցանցի հողային աշխատանքներ, փորված խրամատներում պլաստիկ 570 մ 300մմ տրամագծով և 230 մ 200մմ երկարությամբ խողովակների տեղադրում և միացում, ընդամենը 800 մ երկարությամբ: 400 տնտեսություն կօգտվեն 50հա կավելանա ոռոգելի տարածքը
16	Արփի	Արփի համայնքի Բերդաշեն և Զորակերտ բնակավայրերում համայնքային հանդիսությունների սրահի վերանորոգում	8,732	5,239	3,493	60		ուղարկվել է նախարարություն	ներքին հարդարման աշխատանքներ, ջեռուցման համակարգի տեղադրում, լուսավորություն (5 աշխ)

17	Ամասիա	Ամասիայի խոշորացված համայնքում միջշարային մշակաբույսերի մշակության գյուղտեխնիկայի և գործիքների ձեռքբերում:	25,000	12,500	12,500	50		ուղարկվել է նախարարություն	կավելանա ցանքատարածքները 200-300հա, կզբաղվեն ոչ միայն հացահատիկի և կերաբույսի մշակությամբ այլ նաև կզբաղվեն կերային տարբեր մշակաբույսերի մշակությամբ: Շահառու՝ 200 (3 աշխ)
18	Մարմաշեն	Կոմունալ ծառայության և աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում	91,550	36,620	54,930	40		ուղարկվել է նախարարություն	1 աղբատար, 1 ինքնաթափ , 1 գրեյդեր:
19	Սարապատ	Սերմագտման, ախտահանման, մանրացնող և բարձիչ սարքավորումների ձեռք բերում	8,500	5,100	3,400	60		ուղարկվել է նախարարություն	Գոգովիթ բնակավայրում կստեղծվոն սերմագտման և ախտահանման կայան, շահառուներ՝ 3695, կնվազեն ճանապարհային ծախսերը և ստացված բերքի ինքնարժեքը
Ընդամենը			765,779	430,150	335,630	56			

459392.3	280118.7	179273.6	61
----------	----------	----------	----

1	Արթիկ	«Շիրակի մարզի Արթիկ համայնքի գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում:	27916.0	16750.0	11166.0			չի հաստատվել
2	Սարապատ	Սարապատ խոշորացված համայնքի Հարթաշեն բնակավայրի միջհամայնքային ճանապարհի հիմնանորոգում:	7173.2	5000.0	2173.2			չի հաստատվել